ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2015-4-1-Ա

ք. Երևան 16.09.2015թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2015 թվականի սեպտեմբերի 16-ի նիստում քննարկեց 2015 թվականի օգոստոսի 17-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Մեդա ԱԲ ընկերության (Pipers Vag 2A Box 906, SE-170 09 Solna, Sweden, SE) (այսուհետ՝ բողոքարկող) «Protamin ME» (հայտ №20141627) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված հիմքերով գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն, բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում «Protamin»-ը իրենից ներկայացնում է սպիտակուց, որը հանդիսանում է ամինաթթուների պարզագույն միաձուլում: Պրոտամինը հանդիսանում է ակտիվ բաղադրատարր, այն մեծ կիրառություն ունի դեղաբանության մեջ (ֆարմակալոգիա), որի հավաստիքն էլ հանդիսանում են բազմաթիվ դեղագործական ընկերությունների կողմից գովազդվող կայքերը՝ http://uadoc.com.ua/ru/medicine/protaminu-sulfat-10000me-7091, http://doctor.itop.net/DirectoryItem.aspx?DirId=1&ItemId=1328, http://medtab.com.ua/protamin-me/instrukciya/: Իսկ ինչ վերաբերվում է «ME»

տառակապակցությանը, ապա այն դեղաբանության մեջ հանդիսանում է միջազգային միավոր, որը ցույց է տալիս բաղադրատարրի քանակը տվյալ դեղամիջոցի մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ մերժված ապրանքային նշանի մեջ ներառված «Protamin» տարրը իրենից ներկայացնում է սպիտակուցի անվանում, իսկ ME տառակապակցությանը դեղաբանության մեջ հանդիսանում է միջազգային միավոր, հետևաբար ներկայացված ապրանքային նշանը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն չի կարող գրանցվել:

Բողոքարկողը նիստին չէր ներկայացել:

Փորձաքննության բաժնի փորձագետը պնդեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «Protamin ME» (հայտ №20141627) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ